

«ԳԱՎԱՌԻ ԱԿ. Ա. ԹԱՄԱՍՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՔՈՒԼԵԶ» ՊՈԱԿ-ի

Կառավարման և վարչարարության էթիկայի կանոններ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Նպատակը՝ սահմանել էթիկայի և վարքագծի կանոններ, որոնք կնպաստեն քոլեջում էթիկայի մշակույթի ձևավորմանը՝ կրթության իրականացման գործում և քոլեջի ներքին աշխատանքային հարաբերություններում:
- 1.2 Գործողության ոլորտը և շրջանակը՝ էթիկայի կանոնները տարածվում են քոլեջի բոլոր աշխատակիցների, ուսումնառողների և այլ շահակիցների վրա:
- 1.3 Կարևորությունը՝ հետապնդում է մեկ նպատակ՝ քոլեջի անձանց վարքագծի կառավարում: Էթիկան կարևոր է, քանի որ այն քոլեջում.
 - բավարարում է աշխատողների հիմնական և տարրական կարիքները, սպասելիքներն ու ակնկալիքները,
 - միավորում է աշխատողներին և ղեկավարությանը,
 - բավարարում է որոշումների կայացման գործընթացը:

2. Քոլեջի էթիկայի կանոնների սկզբունքները

- 2.1 Բարեվարքություն – մասնակիցների գործողությունների համահունչության ապահովում բարոյական, էթիկական և կրթության որակի պահանջների հետ
- 2.2 Ազնվություն և ճշմարտացիություն – ցանկացած ստախոսության, խաբեության, գողության և այլ անազնիվ բնույթի արարքների բացառում,
- 2.3 Թափանցիկություն – Քոլեջի գործունեության հրապարակայնություն, հասանելիություն, բացություն,
- 2.4 Հարգանք և վստահություն – կոլեգիալություն աշխատանքային գործունեության մեջ և համագործակցություն,
- 2.5 Հաշվետվողականություն – աշխատակազմի հաշվետվողականությունը կառավարման մարմիններին, քոլեջի գործունեության հաշվետվողականությունը՝ հանրության և վերահսկող մարմինների առջև,
- 2.6 Արդարացիություն – անկողմնակալություն, խտրականության, անազնվության բացառում ուսուցման բոլոր մակարդակներում,

- 2.7 Հավասարություն, արդարություն և սոցիալական արդարություն – հասանելիություն սոցիալական տարբեր խավերի համար, խտրականության բացառում,
- 2.8 Որակյալ կրթություն – տրամադրել հնարավորինս բարձր որակի կրթություն,
- 2.9 Անձնական կատարելագործում և համակարգային բարելավում:

3 . Քոլեջի կառավարման մարմինները և վարչական աշխատակազմը.

3.1 Քոլեջի կառավարման մարմինները և վարչական աշխատակազմը պետք է՝

- 3.1.1 ղեկավար և կառավարման մարմինները, վարչական անձնակազմը իրենց պաշտոնական դիրքի շրջանակում պահպանեն ազնվության սկզբունքը այն բնագավառներում, որոնց համար պատասխանատվություն են կրում,
- 3.1.2 տրամադրեն առավելագույնս թափանցիկ տեղեկատվություն իրենց պատասխանատվության ներքո գտնվող ողջ անձնակազմին և բոլոր շահառուներին, տեղեկությունների տրամադրման արդյունքում չպետք է խախտվի անձնական տվյալների գաղտնիության լիարժեք պահպանումը,
- 3.1.3 ցուցաբերեն ոչ խտրական վերաբերմունք՝ ուսանողների և գործընկերների հետ բոլոր փոխհարաբերություններում,
- 3.1.4 ապահովեն նորամուծությունների ներդրումը և փոփոխություններին հարմարվելու ճկունությունը:

4 . Քոլեջի դասախոսական կազմը.

4.1 Քոլեջի դասախոսական կազմը պետք է.

- 4.1.1 դրսևորի ազնիվ և բաց եղանակով գիտելիք ձեռք բերելու և այն տարածելու համահունչ վարքագիծ՝ ուսանողների, քոլեջի շրջանակում գործընկերների, քոլեջում վարչական և կառավարման աշխատակազմի, պետական, մարմինների, ուսանողների ծնողների (խնամակալների) հանդեպ,
- 4.1.2 պահպանի ազնվություն ուսանողների հետ աշխատանքում՝ դասավանդումը, ուսուցումը և գնահատումն իրականացնելու առումով,
- 4.1.3 անաչառ կերպով գնահատի ուսանողների բոլոր աշխատանքները՝ հաշվի առնելով աշխատողների բուն էությունը և բացառելով ցանկացած արտոնություն, օր.՝ դրամական կաշառք,
- 4.1.4 բացառի խարդախության դեպքերը,
- 4.1.5 հարգանք ցուցաբերի իրենց պատասխանատվության ներքո գտնվող աշխատակազմի տեսակետների նկատմամբ և երաշխավորի վերջիններիս մտքի և խոսքի ազատությունը,
- 4.1.6 նպաստի ազատ և բաց տեղեկատվության տարածմանը, ճշգրիտ տեղեկությունների կազմմանը և ներկայացմանը,
- 4.1.7 պարտավորությունները իրականացնելիս պահպանի կոլեգիալության սկզբունքը,

- 4.1.8 հաշվետու լինի տարբեր վերադաս գործընկերների՝ ինստիտուցիոնալ կառավարման մարմինների, քոլեջի ամբողջ անձնակազմի առջև,
- 4.1.9 ցուցաբերի արդարացիություն դասավանդման, ուսանողների գնահատման, հետազոտության, աշխատակազմի առաջխաղացման և աստիճանների նշանակման ցանկացած գործողությունների հետ կապված,
- 4.1.10 լիարժեք կերպով հանձնառու լինի ուսանողներին որակյալ դասավանդում և ուսումնառություն տրամադրելուն
- 4.1.11 հանձնառու լինի ապահովելու ուսումնական և հետազոտական հնարավորինս բարձր արդյունքներ,
- 4.1.12 մասնագիտական պարտավորություն կրի իր անձնական զարգացման համար:

5. Քոլեջի ուսանողները.

- 5.1 քոլեջի ուսանողները պետք է՝
 - 5.1.1 բարեվարքությունը ընկալեն որպես ազնիվ և բաց եղանակով գիտելիք ձեռք բերելու պարտավորություն,
 - 5.1.2 հավատարիմ լինեն ազնվության սկզբունքին՝ ուսուցման և գնահատման գործընթացում,
 - 5.1.3 ներկայացնեն իրենց կողմից կատարված աշխատանքները՝ խուսափելով ցանկացած տեսակի գրագողությունից և խարդախությունից,
 - 5.1.4 չպետք է առաջարկեն դրամական կաշառք, կատարեն սեռական բնույթի որևէ առաջարկ, որը հնարավորություն կտա ստանալ ուռճացված գնահատականներ,
 - 5.1.5 լինեն ճշմարտախոս քոլեջի անձնակազմի անդամների հետ փոխհարաբերվելիս՝ խուսափելով հաստատության ներսում գողություն կատարելուց և այլ ուսանողներից դրամ շորթելուց,
 - 5.1.6 հանձնառու լինեն զարգացնել սեփական գիտելիքները՝ հիմնվելով ճշմարտացիության սկզբունքի վրա,
 - 5.1.7 հարգանք ցուցաբերեն այլոց նկատմամբ այլ ուսանողների և աշխատակազմի հետ հարաբերություններում,
 - 5.1.8 կարողանան վստահել քոլեջի անձնակազմին, որոնց հետ նրանք շփումներ ունեն, իսկ ուսանողների վարքագիծը պետք է լինի այնպիսին, որ քոլեջի աշխատակազմը և մյուս աշխատողները կարողանան վստահել իրենց,
 - 5.1.9 հաշվետու լինեն ուսանողական խորհրդին,
 - 5.1.10 ցուցաբերեն արդարացիություն համակուրսեցիների և քոլեջի աշխատակազմի հետ հարաբերություններում,
 - 5.1.11 հստակ կերպով դրսևորեն ոչ խտրական վերաբերմունքի, ռասայական խտրականության և կողմնակալության դեմ պայքարի հայեցակարգին համահունչ վարքագիծ՝ համակուրսեցիների և քոլեջի աշխատակազմի հետ փոխհարաբերություններում,
 - 5.1.12 իրենց ակադեմիական աշխատանքները կատարեն որակյալ, նպաստեն քոլեջի գործունեության ընդհանուր որակի բարելավմանը,
 - 5.1.13 պարտավորվեն իրենց ակադեմիական աշխատանքի միջոցով հասնելու անձի առավելագույն կատարելագործման,

5.1.14 արժևորեն քոլեջի ընդհանուր դերը և բաց չթողնեն ցանկացած առիթ ներկայացնելու քոլեջի հնարավորությունները և հաջողությունները:

6. Այլ շահառուներ.

6.1 Այլ շահառուները պետք է՝

6.1.1 դրսևորեն բարեվարքություն, որը կապող օղակ կհանդիսանա էթիկական դրական սկզբունքների ու կրթության որակի միջև և խոչընդոտ կստեղծի կոռուպցիայի դրսևորումների համար,

6.1.2 լինեն ազնիվ և վստահության արժանի, որը կանոնավոր կերպով կբացառի ցանկացած խարդախություն, ստախոսություն, խաբեություն, գողություն, շորթում կամ որևէ այլ անազնիվ արարք,

6.1.3 բոլոր հարաբերություններում ասել ճշմարտությունը,

6.1.4 միանգամայն վստահ լինեն քոլեջի անձնակազմի ազնվության, ճշմարտացիության և բարեվարքության դրսևորման հարցում,

6.1.5 հարգեն և վստահեն միմյանց,

6.1.6 բացառեն խտրականությունը:

7. Պատասխանատվություն.

7.1.1 սույն կանոնների պահպանման վերահսկողությունը իրականացնում է քոլեջի որակի ներքին ապահովման ստորաբաժանումը,

7.1.2 էթիկայի կանոնների խախտումը քննարկվում է քոլեջի որակի ներքին ստորաբաժանման կողմից, տրվում են համապատասխան լուծումներ և կայացվում որոշումներ:

8. ԵԶՐԱՓՄԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն կանոններում առաջարկվող փոփոխություններ ու լրացումներ կարող են կատարվել քոլեջի որակի ներքին ապահովման ստորաբաժանման կողմից՝ նիստերի ընդունված որոշումների հիման վրա,

8.2 էթիկայի կանոնները քննարկում և հաստատում է քոլեջի Խորհուրդը,

8.3 էթիկայի կանոնները ուժի մեջ են մտնում ստորագրման օրվանից:

Քննարկվել և հավանության է արժանացել

«Գավառի ակ Ա. Թամամշևի անվան պետական

գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ -ի

ՈՆԱԶ-ի 18.12.2017 թիվ 2 նիստում